# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## ՈՐՈՇՈՒՄ

08 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 48-Ա

### ՄԱՅԻՍԻ 9-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԾԱՂԻԿՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. Մայիսի 9-ի կապակցությամբ ծաղիկներ ձեռք բերելու համար 2018 թվականի բյուջեի 01.6.1.51 <<ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> ծրագրի 4261 հոդվածից դուրս գրել 34500/երեսունչորս հազար հինգ հարյուր/ դրամ :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2018 թ. մայիսի 8
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 49-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի մայիսի 10-ին՝ ժամը $12^{00}$-ին, Լեռնանիստի համայնքապետարանում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով՝

1) Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 48-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Աշխատակազմի քարտուղար՝ Հովհաննես Մարգարյանին օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող արտահերթ նիստի անցկացման մասին իրազեկել համայնքի ավագանու անդամներին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ. մայիսի 8
գ.Լեռնանիստ